«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆԻՆ

«ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆԻՆ

Եզրակացություն

(պատգամավորական էթիկայի հարցերով)

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանին 27.03.2025 թվականին «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը ներկայացրել է գրություն (այսուհետ նաև՝ Գրություն) այն մասին, որ «Հայաստան» խմբակցությունը նախաձեռնելու է գործընթաց՝ պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ձևավորելու վերաբերյալ՝ ԱԺ պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագիծը քննարկելու նպատակով: Գրությամբ նշել է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 162-րդ հոդվածի 6-րդ մասով անհրաժեշտ է սահմանված ժամկետում «Հայաստան» խմբակցությանը ներկայացնել պատգամավորական էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը:

Գրությամբ նշվել է նաև, որ նման խնդրանքով «Հայաստան» խմբակցությանն են դիմել 100-ից ավել լրագրողներ (լրագրողների կողմից 26.03.2025 թվականին ներկայացված դիմումը (այսուհետ նաև՝ Դիմում) կից ներկայացվել է Գրությանը):

Պատգամավորական էթիկայի հարցերով դիմումներն ուսումնասիրելու և խմբակցություններին եզրակացություն ներկայացնելու պարտականություն ունեցող

մասնագետի կողմից գրություն է ներկայացվել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանին, այն մասին, որ ներկայացված տեսանյութի վերաբերյալ հղումը ակտիվ չէ և հնարավոր չէ այն ուսումնասիրել:

02.04.2025 թվականին «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը գրությամբ տրամադրել է տեսանյութի ակտիվ հղումը https://youtu.be/BaMKM1MKW-M?si=4uwYJ257cqKYF6Dd :

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ժամանակավոր հանձնաժողովը կարող է ստեղծվել առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև **պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման** և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ժամանակավոր հանձնաժողովը ստեղծվում է Ազգային ժողովի որոշմամբ, որի նախագիծը ներկայացնելու իրավունքն ունի խմբակցությունը:

Դիմումում ներառված է հետևյալ տեղեկատվությունը"(մեջբերում Դիմումից)

«(...) Անդրանիկ Քոչարյանը 20.03.2025թ.-ին Ազգային ժողովի միջանցքում ցուցաբերած իր վարքագծով (տեսահոլովակը հասանելի է Youtube հարթակում հետևյալ հղումով ....) խախտել է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի մի շարք կետեր, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, ինչն անհամատեղելի է նրա պատգամավորական մանդատի հետ:

(...) Մենք որպես չորրորդ իշխանության ներկայացուցիչներ, հետամուտ կլինենք, որպեսզի ԱԺ խմբակցությունները շուտափույթ կատարեն օրենքով իրենց վերապահված ոչ միայն իրավունքը, այլև՝ այս պարագայում պարտականությունը՝ դատապարտելու և պատասխանատվության ենթարկելու սեքսիզմի, խտրական վերաբերմունքի ոչ պատշաճ և ակնհայտորեն իրավախախտ դրսևորումներ թույլ տված Անդրանիկ Քոչարյանին:»:

Անհրաժեշտ է արձանագրել, որ որպես Դիմումը ստորագրած անձ նշված է «լրագրողներ»: Թվով 27 անձ ձեռագիր գրել է անուն ազգանուն և ստորագրել: Նշվել է նաև «Օնլայն ստորագրահավաքին միացած լրագրողներ» և գրված է 134 անձի անուն, ազգանուն:

Արձանագրում ենք, որ միայն թվով 2 անձի անվան դիմաց է արված նշում՝ «Լիբանան Զարթոնք օրաթերթի գլխավոր խմբագիր», «MediaLab»: Դիմումում նշված մյուս անձանց լրագրող հանդիսանալու փաստի վերաբերյալ որևէ նույնականացնող տվյալ առկա չէ:

Բոլոր դեպքերում հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրման հիմք է հանդիսանում Գրությունը, որին կից է ներկայացվել Դիմումը, ապա Դիմումը ուսումնասիրվում է այն կանխավարկածից ելնելով, որ Գրությունը ստորագրած անձի կողմից՝ Դիմումը ներկայացրած անձինք նույնականացվել են, Դիմումը համարվել է պատշաճ ստորագրված և արժանահավատ:

Ուսումնասիրելով ներկայացված տեսանյութը արձանագրում ենք հետևյալը.

«-Մի քիչ էնկողմ էլի, ես խնդրում եմ, Դուք էնկողմ կանգնեք, (Անդրանիկ Քոչարյան)

-Ինչի՞ (լրագրող)

-էդպես եմ ուզում, մի խանգարեք Ձեր գործընկերներին, (Անդրանիկ Քոչարյան)

-ես երբ եմ խանգարել, (լրագրող)

-Դուք միշտ ինձ խանգարում եք, էնտեղ կանգնեք, Դուք, եթե չէ, ես կգնամ, չեմ պատասխանի Ձեր գործընկերներին, (Անդրանիկ Քոչարյան)

-պարոն Քոչարյան էս ինչ բան ա, (լրագրող)

-էդպես, էդպես, որտև ես առաջնորդվում եմ հոգևորականի էն առաջարկին, որ Ձեզ արեց. Մաքրեք Ձեր շրթունքները: Շատ լավ: (Անդրանիկ Քոչարյան)

-Էս ինչ եք ասում պարոն Քոչարյան, (լրագրող)

-ոչ մի բան, ասեք, (Անդրանիկ Քոչարյան)

-այսինքն, էս ինչ բուլինգ եք Ձեր կարծիքով, (լրագրող)

-էտ ինչ բառեր են, ինչ բուլինգ են, (Անդրանիկ Քոչարյան)

-բուլինգի եք ենթարկում լրագրողներին Ձեր կարծիքով, (լրագրող)

-լրագրող չէ, տիկին Ջեբեջյանին: Լրագրողները էստեղ կանգնած են (Անդրանիկ Քոչարյան)

-իսկ հոգևորականին, որ ցիտում եք, (լրագրող)

-շատ լավ (Անդրանիկ Քոչարյան),

-գոնե կոնտեքստն էլ կցիտեք ինչի ... (լրագրող)

-ոչ, խանգարում եք (Անդրանիկ Քոչարյան),

-Ինչով եք պայմանավորում Ադրբեջանի ագրեսիվ պահվածքը և այս .... (լրագրող):»

Ըստ Դիմումը ներկայացրած անձանց գանահատողական դատողության՝ թույլ է տրվել սեքսիզմի, խտրական վերաբերմունքի ոչ պատշաճ և ակնհայտորեն իրավախախտ դրսևորումներ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Պատգամավորը պարտավոր է՝ պահպանել պատգամավորական էթիկայի կանոնները:

«Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պատգամավորական էթիկայի կանոններն են՝

1) հարգել օրենքը և ենթարկվել օրենքին.

2) հարգել հանրության բարոյական նորմերը.

3) պահպանել Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների նիստերի և խորհրդարանական լսումների անցկացման կարգը.

4) իր լիազորություններն իրականացնելիս չառաջնորդվել իր կամ իր հետ փոխկապակցված անձանց անձնական շահերով.

5) չօգտագործել պատգամավորի պաշտոնի հեղինակությունն ի շահ իրեն կամ այլ անձի.

6) իր գործունեությամբ նպաստել Ազգային ժողովի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը.

7) ամենուր և ցանկացած գործունեությամբ զբաղվելիս դրսևորել պատգամավորին վայել վարքագիծ.

8) հարգալից վերաբերմունք ցուցաբերել քաղաքական ընդդիմախոսների, Ազգային ժողովում հարցերի քննարկման մասնակիցների, լրագրողների, ինչպես նաև բոլոր այն

անձանց նկատմամբ, որոնց հետ պատգամավորը շփվում է իր լիազորություններն իրականացնելիս:

Վերոգրյալից ելնելով և հիմք ընդունելով, որ ուսումնասիրված տեսանյութում հնչեցված արտահայտությունների իրական միտումը և դրանց համատեքստը պարզաբանելու և օբյեկտիվ գնահատելու անհրաժեշտություն կա, գտնում ենք, որ տեսանյութի հանգամանքները պարզելու և քննարկելու համար կարող է ստեղծվել ժամանակավոր հանձնաժողով:

Սույն եզրակացությանը կցվում է նաև Գրությունը և Դիմումը:

Եզրակացությունը կազմվել է ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 162-րդ հոդվածի 6-րդ մասով:

Պատգամավորական էթիկայի հարցերով դիմումներն ուսումնասիրելու և
խմբակցություններին եզրակացություն ներկայացնելու
պարտականություն ունեցող մասնագետ,
ԱԺ աշխատակազմի իրավաբանական վարչության
պետ՝ Մարի Ստեփանյան